ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

01.05.2015 16:09

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի համատեղ նախաձեռնությամբ Աշխատանքի օրվա կապակցությամբ փաստաբանները և փաստաբանական դպրոցի պրակտիկայում գտնվող ունկնդիրներն անվճար իրավաբանական խորհրդատվություն են մատուցել շուրջ 28 քաղաքացիների:

Փաստաբանական դպրոցի ունկնդիրները հանրային պաշտպանների հետ միասին պատասխանել են քաղաքացիների հարցերին, որոնք հիմնականում առնչվել են ժառանգությանը, սեփականության իրավունքին և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Խորհրդատվական աշխատանքներն անձամբ համակարգել է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը:

Հիշեցնենք նաև, որ յուրաքանչյուր հինգշաբթի ՀՀ բոլոր քաղաքացիները՝ անկախ սոցիալական դիրքից, կարող են ստանալ անվճար իրավաբանական խորհրդատվություն ՀՀ փաստաբանների պալատում:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })